«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 Մայիսի 2023, N 7 - 7

031101.04.7 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում ձևավորված մասնագիտական խմբի կողմից 2021 թվականին հաստատված և 2023-2024 ուսումնական տարվանից ներդրվելիք մագիստրոսական ուսուցման 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի 10 տոկոսը գերազանցող փոփոխությունները հաստատելու և նոր ուսումնական ծրագիրը ներդնելու մասին հարցը, **արձանագրելով,** որ կրթական ծրագրում արտաքին փորձագետների առաջարկած վերջնարդյունքներն ու պարտադիր դասընթացները մնացել են անփոփոխ, իսկ ամբիոնը հիմնականում միավորման եղանակով կրճատել է երկրագիտական (ԵՄ ինստիտուտներ, ԵՄ, ԵԱՏՄ և ՀՀ ընտրությունը, ճապոնագիտություն) դասընթացները, կողմ քվեարկությամբ հաստատվել է միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2023 թվականի մայիսի 10-ի նիստում և հաստատման է երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի մայիսի 19-ի թիվ 2 նիստում՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **2023-2024** ուսումնական տարում 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայում ներդրվող ուսումնական պլանը հաստատել նոր խմբագրությամբ և 2023-2024 ուսումնական տարում ընդունված ուսանողների ուսուցումն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանով:
2. Ներառյալ մինչև 2023-2024 ուսումնական տարին 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված ուսանողների ուսուցումը շարունակել ընդունելության պահի դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:

3. Հանձնարարել ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի հունիսի 20-ը 031101.04.7 «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանի համապատասխան մոդուլները:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. մայիսի 31
Երևան